ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 194 – Ա 26 սեպտեմբերի 2017 թ.

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12 կետի բ'' ենթակետով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից 250000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ սոցիալական աջակցության նպատակով հատկացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի 100 և ավելի տարեկան թվով 5 /հինգ/ կենսաթոշակառուների՝ յուրաքանչյուրին 50000 /հիսուն հազար/-ական դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ, գումարը վճարել մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի վարիչ Սուրիկ Խաչատրյանի միջոցով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2017 թ. սեպտեմբերի 26- ի
N 194-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂԻ

h/h	Ազգանուն անուն	հասցե	հատկացված գումարի չափը դրամով	Ծանոթություն
1.	Բաղոյան Դուխիկ	Արծվաքար թաղամաս	50000/հիսուն հազար/	101 տարեկան
2.	Թադևոսյան Ռոզիկ	գ. Կարմրիրգյուղ	50000/հիսուն հազար/	101 տարեկան
3.	Փինաչյան Դուրմեն	գ. Երանոս	50000/հիսուն հազար/	115 տարեկան
4.	Թադևոսյան Սահակ	գ. Ծովինար	50000/հիսուն հազար/	101 տարեկան
5.	Սահակյան Օսան	գ. Վարդենիկ	50000/հիսուն հազար/	100 տարեկան

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Առողջապահության և սոցիալական
ապահովության վարչություն
կատարող՝ Գոհար Խանդանյան
Հեռ՝ (0264) 2-48 31